# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.05.2021թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2021/103**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ներկայացուցիչներ Ա. Մկրտչյանի և Մ. Մկրտչյանի (լիազորագիր՝ տրված 27.04.2021թ.),

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի տնօրեն Ն.Մուրադյանի (պետական գրանցման վկայական N 03Ա974617),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2021թ. թիվ 26/26-1/6054-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

### 1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 15.04.2021թ. թիվ 20/2021 գրության հիման վրա 21.04.2021թ. թիվ 26/26-1/6054-2021 գրությամբ նախաձեռնել է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

## 2. «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն ոչ միայն առարկում է, այլ շարունակում է պնդել, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը դիտավորյալ միտում է ունեցել միակողմանի խզել պայմանագիրը և այդ պատճառով կայացրել է խտրական և ոչ ողջամիտ մի շարք որոշումներ:

Մեր ուղարկած մի շարք առարկությունների մեջ համառոտ նկարագրել ենք այն հիմքերն ու փաստերը, որոնց հիման վրա եկել ենք նման եզրակացության /կցվում են նամակին/:

2021 թվականի մարտի 15-ին Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև կնքվել է Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար թիվ ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/2 պետական գնման պայմանագիրը: «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն անմիջապես անցել է սույն պայմանագրում /այսուհետ՝ պայմանագիր/ նշված աշխատանքների կատարմանը՝ այդ մասին նախապես համաձայնեցնելով պատասխանատու Արամայիս հետ: Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի համաձայն՝ աշխատանքների սկիզբը նշված է մարտ ամսվա առաջին տասնօրյակից: Սակայն Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամն ի սկզբանե ուշ է ներկայացրել մրցույթը, որի հետևանքով պայմանագիրը ուշ է կնքվել, և աշխատանքները փաստացի սկսվել են մարտի 16-ից: Այս օրից հաշված՝ տասը օրվա ընթացքում, արվել են ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/2 պայմանագրի Տեխնիկական բնութագրում նշված աշխատանքները մարտի առաջին տասնօրյակի համար /այգեբացի աշխատանքներ/: Դրանից հետո պատրաստվում էր իրականացնել միջշարային տարածությունների խորը վար: Սակայն բնական է, որ Տեխնիկական բնութագրով 30 օր տրված հնարավոր չէր իրականացնել 15 օրում, այդ պատճառով բանավոր պայմանավորվածություն էր ձեռք բերվել աշխատանքների մի մասը վերջացնել մինչև ապրիլի 15-ը: Մարտի 30-ին «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն ներկայացնում է հանձնման - ընդունման արձանագրություն մարտ ամսվա համար՝ ներկայացնելով միայն կատարած աշխատանքները: Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը մերժում է՝ տալով բացասական եզրակացություն, իսկ շտկումների համար տալիս է ոչ ողջամիտ՝ 2 օրացուցային օր ժամկետ: Բացասական եզրակացության մեջ նշվում է, որ չի

կիրառվել հերբիցիդ, որը ըստ Տեխնիկական բնութագրի պետք է կատարվի ավելի ուշ՝ վեգետացիոն շրջանում /Տեխնիկական բնութագրում չկա նշված հստակ ժամկետ/: Ինչպես նաև նշվում է, որ աշխատանքները նախօրոք չեն համաձայնեցվել Պատվիրատուի հետ, որը ընդհանրապես չի համապատասխանում իրականությանը, քանի որ մարտի 15-ից «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի տնօրեն Նարեկ Մուրադյանը մշտական կապի մեջ է եղել պատասխանատու Արամայիս Մկրտչյանի հետ և բոլոր աշխատանքները համաձայնեցրել է նրա հետ /դրա մասին կարող է վկայել նրանց միջև բազմաթիվ հեռախոսազանգերը/: Բացասական եզրակացության մեջ նշված 2 օրյա ժամկետը ոչ ողջամիտ է, քանի որ անհնար է 2 օրում ավարտել այն աշխատանքները, որոնց համար Տեխնիկական բնութագրով տրված է 15 օր: Ցանկանում եմ նշել, որ բացասական եզրակացությունները ուղարկվել են ոչ աշխատանքային օր՝ շաբաթ երեկոյան, և երկուշաբթի օրը նշված 2 օրյա ժամկետը ավարտվում էր, որը նույնպես վկայում է ժամկետի ոչ ողջամիտ լինելը: Ապրիլի 5-ին «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն տեսանկարահանում է իր կողմից կատարված աշխատանքները և որևէ համաձայնության չգալով պատասխանատու Արամայիս հետ՝ դադարեցնում է աշխատանքները՝ դիմել դատարան՝ խտրական և սուբյեկտիվ վերաբերմունքի հիմքով: Ապրիլի 6-ին «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին ուղարկել է դիմում - առարկություն /կցվում է/ խտրական ու սուբյեկտիվ վերաբերմունքի վերաբերյալ, նշելով շտկումների ժամկետի ոչ ողջամիտ լինելը և հիմնադրամի դիտավորյալ միտումը՝ պայմանագիրը միակողմանի խզելու: Ապրիլի 12-ին հիմնադրամն ուղարկել է ծանուցում պայմանագիրը միակողմանի խզելու վերաբերյալ և կազմակերպությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշման մասին:

Այս պատճառով «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի դեմ ներկայացրած հայտը գնումներին մասնակցելու իրավունք չունեցող ցուցակում ներառելու վերաբերյալ համարում եմ անհիմն: Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը շարունակում է իր դիտավորյալ խտրական միտումները «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի նկատմամբ: Եվ այդ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամն է, որ պետք է պատասխանատվություն կրի պաշտոնեական դիրքի չարաշահման, խտրական ու ոչ ողջամիտ որոշումների, արհեստական խոչընդոտներ ստեղծելու համար»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/103 ընթացակարգի շրջանակներում 27.04.2021թ. ժամը 09:10-ին և 30.04.2021թ. ժամը 09:17-ին հրավիրված

նիստերի վերաբերյալ, 30.04.2021թ. ժամը 09:17-ի նիստով տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Պատվիրատուին է ներկայացրել կատարված աշխատանքների մասով կատարողական ակտ, որի մասով Պատվիրատուի կողմից տրվել է դրական եզրակացություն: Այնուհետև, շաբաթ օրով Պատվիրատուն դրական եզրակացությունը փոխարինել է բացասական եզրակացությամբ և Ընկերությանը աշխատանքների կատարման համար տվել է 2 օրյա ժամկետ:

Ընկերությունը դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ 2 օրյա ժամկետը ողջամիտ չէ, հաշվի առնելով այն փաստը, որ պայմանագրով նախատեսված որոշ աշխատանքների իրականացման համար ժամկետը նախատեսված է եղել 2021թ. մարտ ամսվա առաջին տասնօրյակին, մինչդեռ կողմերի միջև պայմանագիրը կնքվել է մարտի 15-ին, որի մասով Պատվիրատուի հետ եղել է բանավոր պայմանավորվածություն, որ աշխատանքները կկատարվեն ապրիլ ամսին»:

**3. <u>Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.04.2021թ. թիվ 20/2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի մարտի 15-ին կնքված Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար հողային աշխատանքների կատարման թիվ ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/2 պետական գնման պայմանագրի 2.13 կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջները՝ Պատվիրատուն՝

1. Միակողմանի լուծել է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի հետ 15.03.2021թ. կնքված այգիների պահպանման ծառայությունների մատուցման թիվ ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/2 պետական գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 13.04.2021թ. միաժամանակ ուղարկվել է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am հասցեով ինտերնետային կայքում:

Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ դիմում ենք Ձեզ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գործընթաց նախաձեռնելու նպատակով համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/103 ընթացակարգի շրջանակներում 27.04.2021թ. ժամը 09:10-ին և 30.04.2021թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 30.04.2021թ. ժամը 09:17-ի նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր մասնավորապես հայտնել են հետևյալը.

«Ինչ վերաբերում է Ընկերության կողմից հնչեցված այն պնդմանը, որ դրական եզրակացությունը փոխարինվել է բացասականով, ապա հայտնում եմ, որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Պատվիրատուի կողմից տրված դրական եզրակացությունը վերաբերում էր մարտ ամսվա առաջին տասնօրյակին, որի մասով աշխատանքները ամբողջությամբ կատարվել են, այնուհետև դրական եզրակացությունը համակարգում փոխարինվել է բացասական եզրակացությամբ, որը վերաբերվել է մարտ ամսվա երկրորդ կեսի համար նախատեսված աշխատանքներին»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցադրմանը՝ արդյո՞ք հնարավոր է մարտ ամսվա առաջին տասնօրյակի աշխատանքները չկատարելով՝ սկսել մարտ ամսվա երկրորդ կեսի աշխատանքները, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ, եթե կատարողը չի սկսում պայմանագրով նախատեսված մարտ ամսվա առաջին տասնօրյակի համար նախատեսված աշխատանքները, չի կարող անցնել մարտ ամսվա երկրորդ կեսի համար նախատեսված աշխատանքներին, այսինքն՝ պայմանագիրը կնքելուց հետո կատարողը նախ պետք է կատարեր մարտ ամսվա առաջին տասնօրյակի աշխատանքները, նոր միայն, ըստ հաջորդականության, կատարեր տեխնիկական բնութագրով նախատեսված հաջորդիվ աշխատանքները:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/103 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/103 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 15.03.2021թ. կնքվել է «ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/2» ծածկագրով՝ հողային

աշխատանքների կատարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հողային աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրի 1.2 ենթակետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրին կից N 1 հավելվածը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, սահմանվել է հետևյալ տեսքով՝

*Հավելված N 1*
*«  »  2021 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 45111420/1 | Ներկայացվում է ստորև | դրամ | | | 1 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 01.12.2021 |

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

*Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին ի պահ տրված՝ Վաղարշապատ քաղաքում գտնվող, 1,4 հա մակերես զբաղեցնող խաղողի կոլեկցիոն (2550 վազ) և 1 հա ցուցադրական (2000 վազ) այգիներում, 1,8 հա ֆիլոքսերադիմացկուն սորտ պատվաստակալների մայրուտ այգում, ինչպես նաև խաղողի արմատակալների բազմացման և աճեցման նպատակով տնկարանի հատվածում Կատարողը պետք է իրականացնի ստորև նշված հողային աշխատանքները համաձայն օրացուցային գրաֆիկի:*

*Մասնավորապես, կոլեկցիոն և ցուցադրական այգիներում պետք է իրականացվեն.*

***<u>2021թ. մարտ ամսվա առաջին տասնօրյակում</u>*** *նշված այգիներում այգեբացի / հողածածկի տակից վազերի դուրս բերում/ աշխատանքներ՝ առանց վազերի մեխանիկական վնասման: Աշխատանքները կատարվելու են ձեռքով:*

***<u>Մարտ ամսվա երկրորդ կեսին</u>*** *իրականացնել տնկարկների (4.1 հա) միջշարային տարածությունների խորը վար՝ 25–30 սմ խորությամբ, տեխնիկայով:*

*Վեգետացիայի ընթացքում տնկարկների միջշարային տարածություններում կատարել մոլախոտերի դեմ պայքար՝ կուլտիվացիա, մայիս-օգոստոս ժամանակահատվածում՝ նվազագույնը 3 անգամ /մոլախոտերի աճից կախված հաճախականությունը ենթակա է փոփոխման/:*

*Միջվազային տարածությունների մոլախոտերի դեմ պայքարի նպատակով ձեռքով իրականացնել քաղհան-փխրեցում՝ մայիս-օգոստոս ամիսներին նվազագույնը 3 անգամ /մոլախոտերի աճից կախված հաճախականությունը ենթակա է փոփոխման/: Մոլախոտերի դեմ պայքարի նպատակով վաղ գարնանը միջվազային, այգիների գլխամասային հատվածներում կիրառել հերբիցիդ: Ինչպես նաև տնկարկների միջվազային տարածություններում կիրառել հերբիցիտ ըստ պահանջի, վեգետացիայի ընթացքում նվազագույնը 2 անգամ/ մոլախոտերի աճից կախված հաճախականությունը ենթակա է փոփոխման/:*

*Տնկարկները ոռոգելու նպատակով մայիս-նոյեմբեր ժամանակահատվածում տեխնիկայով բացել ջրի ակոսներ /ըստ պահանջի/՝ միջշարային տարածություններում և հիմնական գլխամասային, այգեմիջյան հատվածներում: Ժամանակահատվածի ընթացքում աշխատանքը կատարել նվազագույնը 3 անգամ:*

*2021 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում կատարել 2,4 հա մակերեսով խաղողի կոլլեկցիոն և ցուցադրական տնկարկների այգեթաղի /վազերը ծածկել հողաշերտով/ աշխատանքներ /աշխատանքները կատարվում են ձեռքով/:*

***Տնկարանի հիմնում և կատարվող աշխատանքներ.***

*Խաղողի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի աճեցման և բազմացման նպատակով տնկարանի համար նախատեսված հողամասի հատվածում պետք է կատարվեն հետևյալ աշխատանքները.*

*Մասնավորապես՝ 1000-1300 մ$^2$ մակերեսով տարածքի մաքրում և աղբակույտի հեռացում: Այնուհետև խորը վար՝ 25–30 սմ խորությամբ, տեխնիկայով: Հաջորդիվ կատարել տարածքի հարթեցում տեխնիկայով: Նախապատրաստել հողը՝ կիրառել հերբիցիդ: Արմատակալների տնկման նպատակով բացել ակոսներ՝ տեխնիկայով: Համապատասխան շարքերով, հողաշերտի մակերեսով անցկացնել պոլիէթիլենային թաղանթ: Պատվաստի համալիրից տեղափոխել արմատակալները և տնկել դրանք համապատասխան շարքերում: Տնկման սխեման նախօրոք քննարկել և համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Տնկումից հետո արմատակալների կպչողականության բարձր մակարդակ ապահովելու նպատակով կատարել մոլախոտերի հեռացում/քաղհան շարքերում: Կախված մոլախոտերի աճից գործողությունը կատարել նվազագույնը 4 անգամ: Արմատակլաների աճման ընթացքում ոռոգել տնկարանը նվազագույնը 10 անգամ: Աճեցման և բազմացման ենթակա արմատակալների նախնական քանակը կլինի նվազագույնը 2500 հատ:*

*Վերը նկարագրված աշխատանքների կատարման ընթացքում գործիքները, բոլոր անհրաժեշտ օժանդակ պարագաները և նյութերը ձեռք են բերվում Կատարողի կողմից:*

*Նախքան մեկնարկը Պատվիրատուի հետ կազմել և համաձայնեցնել աշխատանքների հավանական ժամանակացույցը:*

4. Պատվիրատուն «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ուղղված 12.04.2021թ. թիվ 17/2021 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2021 թվականի մարտի 15- ին կնքված Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար հողային աշխատանքների կատարման թիվ ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/2 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հողային աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 3 950 000 (երեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ և ըստ Պայմանագրով սահմանված վճարման ժամանակացույցով մարտ ամսվա պլանավորվող աշխատանքների վճարը կազմում է 790 000 (յոթ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 30 մարտի 2021 թվականին Ձեր կողմից կատարված աշխատանքների մասով, ներկայացրել է բացասական եզրակացություն և 03.04.2021 թվականին էլեկտրոնային փոստի միջոցով Ձեզ է ծանուցվել այն աշխատանքների անվանումները, որոնք չեն կատարվել կամ կատարվել են թերություններով և համարվում են չկատարված:

Միաժամանակ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1 կետի 2.1.2 ենթակետի «ա» պարբերությամբ սահմանվել է անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ՝ 2 օրացուցային օր: Սակայն ոչ մի քայլ չեք ձեռնարկել, և ի պատասխան այդ գրությանը՝ կրկին ներկայացրել եք անհիմն պատճառաբանություններ և աշխատանքը կատարելու համար անընդունելի և ոչ իրավաչափ պայմաններ:

Վերոնշյալով պայմանավորված Կատարողը խախտել է նաև պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը, սակայն՝ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի այն աշխատանքը՝ այգիների այգեբացի/ հողածածկի տակից վազերի դուրսբերման/ աշխատանքներ, որոնք Ձեր կողմից ամբողջությամբ կատարվել են, Պատվիրատուի կողմից ընդունվել են և դրանց դիմաց վճարման ենթակա աշխատանքների նախահաշվարկի արժեքը կազմում է 192 000 (մեկ հարյուր ինսնուներկու հազար) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգյալի և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերը՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կատարված աշխատանքները չեն համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և խախտվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 09.04.2021 թվականին միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

5. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 13.04.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում:

**<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2021թ. թիվ 26/26-1/6054-2021 գրությունը, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի 15.04.2021թ. թիվ 20/2021 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի՝ գրությամբ հայտնած դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 15.03.2021թ. կնքվել է «ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/2» ծածկագրով՝ հողային աշխատանքների կատարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հողային աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 ենթակետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից N 1 հավելվածը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, սահմանվել է հետևյալ տեսքով՝

*Հավելված N 1*
*« » 2021 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 45111420/1 | Ներկայացվում է ստորև | դրամ | | | 1 | ք. Վաղարշապատ, Իսի-լե-Մուլինոյի փող., 1 շենք | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 01.12.2021 |

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

*Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին ի պահ տրված՝ Վաղարշապատ քաղաքում գտնվող, 1,4 հա մակերես զբաղեցնող խաղողի կոլեկցիոն (2550 վազ) և*

*1 հա ցուցադրական (2000 վազ) այգիներում, 1,8 հա ֆիլոքսերադիմացկուն սորտ պատվաստակալների մայրուտ այգում, ինչպես նաև խաղողի արմատակալների բազմացման և աճեցման նպատակով տնկարանի հատվածում Կատարողը պետք է իրականացնի ստորև նշված հողային աշխատանքները համաձայն օրացուցային գրաֆիկի:*

*Մասնավորապես, կոլեկցիոն և ցուցադրական այգիներում պետք է իրականացվեն.*

***<u>2021թ. մարտ ամսվա առաջին տասնօրյակում</u>*** *նշված այգիներում այգեբացի / հողածածկի տակից վազերի դուրս բերում/ աշխատանքներ՝ առանց վազերի մեխանիկական վնասման: Աշխատանքները կատարվելու են ձեռքով:*

***<u>Մարտ ամսվա երկրորդ կեսին</u>*** *իրականացնել տնկարկների (4.1 հա) միջշարային տարածությունների խորը վար՝ 25–30 սմ խորությամբ, տեխնիկայով:*

*Վեգետացիայի ընթացքում տնկարկների միջշարային տարածություններում կատարել մոլախոտերի դեմ պայքար՝ կուլտիվացիա, մայիս-օգոստոս ժամանակահատվածում՝ նվազագույնը 3 անգամ /մոլախոտերի աճից կախված հաճախականությունը ենթակա է փոփոխման/:*

*Միջվազային տարածությունների մոլախոտերի դեմ պայքարի նպատակով ձեռքով իրականացնել քաղհան-փխրեցում՝ մայիս-օգոստոս ամիսներին նվազագույնը 3 անգամ /մոլախոտերի աճից կախված հաճախականությունը ենթակա է փոփոխման/: Մոլախոտերի դեմ պայքարի նպատակով վաղ գարնանը միջվազային, այգիների գլխամասային հատվածներում կիրառել հերբիցիդ: Ինչպես նաև տնկարկների միջվազային տարածություններում կիրառել հերբիցիտ ըստ պահանջի, վեգետացիայի ընթացքում նվազագույնը 2 անգամ/ մոլախոտերի աճից կախված հաճախականությունը ենթակա է փոփոխման/:*

*Տնկարկները ոռոգելու նպատակով մայիս-նոյեմբեր ժամանակահատվածում տեխնիկայով բացել ջրի ակոսներ /ըստ պահանջի/՝ միջշարային տարածություններում և հիմնական գլխամասային, այգեմիջյան հատվածներում: Ժամանակահատվածի ընթացքում աշխատանքը կատարել նվազագույնը 3 անգամ:*

*2021 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում կատարել 2,4 հա մակերեսով խաղողի կոլլեկցիոն և ցուցադրական տնկարկների այգեթաղի /վազերը ծածկել հողաշերտով/ աշխատանքներ /աշխատանքները կատարվում են ձեռքով/:*

*Տնկարանի հիմնում և կատարվող աշխատանքներ.*

*Խաղողի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի աճեցման և բազմացման նպատակով տնկարանի համար նախատեսված հողամասի հատվածում պետք է կատարվեն հետևյալ աշխատանքները.*

*Մասնավորապես՝ 1000-1300 մ$^2$ մակերեսով տարածքի մաքրում և աղբակույտի հեռացում: Այնուհետև խորը վար՝ 25–30 սմ խորությամբ, տեխնիկայով: Հաջորդիվ կատարել տարածքի հարթեցում տեխնիկայով: Նախապատրաստել հողը՝ կիրառել հերբիցիդ: Արմատակալների տնկման նպատակով բացել ակոսներ՝ տեխնիկայով: Համապատասխան շարքերով, հողաշերտի մակերեսով անցկացնել պոլիէթիլենային թաղանթ: Պատվաստի համալիրից տեղափոխել*

*արմատակալները և տնկել դրանք համապատասխան շարքերում: Տնկման սխեման նախօրոք քննարկել և համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Տնկումից հետո արմատակալների կպչողականության բարձր մակարդակ ապահովելու նպատակով կատարել մոլախոտերի հեռացում/քաղհան շարքերում: Կախված մոլախոտերի աճից գործողությունը կատարել նվազագույնը 4 անգամ: Արմատակլաների աճման ընթացքում ոռոգել տնկարանը նվազագույնը 10 անգամ: Աճեցման և բազմացման ենթակա արմատակալների նախնական քանակը կլինի նվազագույնը 2500 հատ:*

*Վերը նկարագրված աշխատանքների կատարման ընթացքում գործիքները, բոլոր անհրաժեշտ օժանդակ պարագաները և նյութերը ձեռք են բերվում Կատարողի կողմից:*

*Նախքան մեկնարկը Պատվիրատուի հետ կազմել և համաձայնեցնել աշխատանքների հավանական ժամանակացույցը:*

Պատվիրատուն «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ուղղված 12.04.2021թ. թիվ 17/2021 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2021 թվականի մարտի 15- ին կնքված Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար հողային աշխատանքների կատարման թիվ ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/2 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հողային աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 3 950 000 (երեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ և ըստ Պայմանագրով սահմանված վճարման ժամանակացույցով մարտ ամսվա պլանավորվող աշխատանքների վճարը կազմում է 790 000 (յոթ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 30 մարտի 2021 թվականին Ձեր կողմից կատարված աշխատանքների մասով, ներկայացրել է բացասական եզրակացություն և 03.04.2021 թվականին

էլեկտրոնային փոստի միջոցով Ձեզ է ծանուցվել այն աշխատանքների անվանումները, որոնք չեն կատարվել կամ կատարվել են թերություններով և համարվում են չկատարված:

Միաժամանակ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1 կետի 2.1.2 ենթակետի «ա» պարբերությամբ սահմանվել է անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ՝ 2 օրացուցային օր: Սակայն ոչ մի քայլ չեք ձեռնարկել, և ի պատասխան այդ գրությանը՝ կրկին ներկայացրել եք անհիմն պատճառաբանություններ և աշխատանքը կատարելու համար անընդունելի և ոչ իրավաչափ պայմաններ:

Վերոնշյալով պայմանավորված Կատարողը խախտել է նաև պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը, սակայն՝ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի այն աշխատանքը՝ այգիների այգեբացի/ հողածածկի տակից վազերի դուրսբերման/ աշխատանքներ, որոնք Ձեր կողմից ամբողջությամբ կատարվել են, Պատվիրատուի կողմից ընդունվել են և դրանց դիմաց վճարման ենթակա աշխատանքների նախահաշվարկի արժեքը կազմում է 192 000 (մեկ հարյուր ինսնուներկու հազար) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգյալի և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի <<ա>> և <<բ>> ենթակետերը՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կատարված աշխատանքները չեն համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին և խախտվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 09.04.2021 թվականին միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 13.04.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ....:

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 3.1, 3.2 և 3.3 կետերի համաձայն՝

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում

են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ ***արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի***

***պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում:*** Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն.

3) եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք վերջինս

1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ սույն գործի շրջանակներում Պատվիրատուի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրվել Պայմանագրի կատարման շրջանակներում Ընկերությանը տրված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացություն՝ թվագրված 30.03.2021թ., համաձայն որի՝

- Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ N 01 եզրակացությամբ՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից, արձանագրվել է հետևյալը.

*«Հողային աշխատանքներ-այգեբացի/հողածածկի տակիցվազերի դուրսբերում/ աշխատանքներ» - Նշումներ անհամապատասխանությունների մասին՝*

*Մարտ ամսվա երկրորդ կեսին չի իրականացվել տնկարկների (4.1 հա) միջշարային տարածությունների խորը վար՝ 25-30 սմ խորությամբ, տեխնիկայով:*

*Մոլախոտերի դեմ պայքարի նպատակով վաղ գարնան միջվազային, այգիների գլխամասային հատվածներում չի կիրառվել հերբիցիդ:*

*Նախքան մեկնարկը Պատվիրատուի հետ չի կազմվել և համաձայնեցվել աշխատանքների հավանական ժամանակացույցը:*

*Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ բացասական եզրակացություն և 15.03.2021 թվականին կնքված N ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-21-2 պայմանագրի 2.1 կետի 2.1.2 ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված՝*

*21. Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.*

*ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ:*

*Վերոգրյալով պայմանավորված Պատվիրատուի կողմից ողջամիտ ժամկետ է սահմանվում սույն եզրակացության հրապարակման հաջորդող օրվանից հաշված 2 օրացուցային օր»:*

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերության տնօրենը գործի քննության նպատակով 30.04.2021թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստի ընթացքում Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի կողմից տրված բացասական եզրակացության վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Ընկերությունը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Պատվիրատուին է ներկայացրել կատարված աշխատանքների մասով կատարողական ակտ, որի մասով Պատվիրատուի կողմից տրվել է դրական եզրակացություն: Այնուհետև, շաբաթ օրով Պատվիրատուն դրական եզրակացությունը փոխարինել է բացասական եզրակացությամբ և Ընկերությանը աշխատանքների կատարման համար տվել է 2 օրյա ժամկետ:

Ընկերությունը դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ 2 օրյա ժամկետը ողջամիտ չէ, հաշվի առնելով այն փաստը, որ պայմանագրով նախատեսված որոշ աշխատանքների իրականացման համար ժամկետը նախատեսված է եղել 2021թ. մարտ ամսվա առաջին տասնօրյակը, մինչդեռ կողմերի միջև պայմանագիրը կնքվել է մարտի 15-ին, որի մասով Պատվիրատուի հետ եղել է բանավոր պայմանավորվածություն, որ աշխատանքները կկատարվեն ապրիլ ամսին»:

Վերը նշվածի մասով Պատվիրատուի ներկայացուցիչը նիստի ընթացքում հայտնել է հետևյալը.

«Էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Պատվիրատուի կողմից տրված դրական եզրակացությունը վերաբերում էր մարտ առաջին տասնօրյակին, որի մասով աշխատանքները Ընկերության կողմից ամբողջությամբ կատարվել են, այնուհետև համակարգում դրական եզրակացությունը փոխարինվել է բացասական եզրակացությամբ, որը վերաբերվել է մարտ ամսվա երկրորդ կեսի համար նախատեսված աշխատանքներին»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նիստի ընթացքում Պատվիրատուին պահանջ է ներկայացվել՝ տրամադրելու Պատվիրատուի կողմից Պայմանագրի կատարման շրջանակներում armeps համակարգի միջոցով Ընկերությանը տրված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը, որը այնուհետև Պատվիրատուի կողմից հեռացվել է համակարգից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ սույն գործի շրջանակներում Պատվիրատուի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրվել Պայմանագրի կատարման շրջանակներում Ընկերությանը տրված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացություն՝ թվագրված 30.03.2021թ., համաձայն որի՝

- Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ N 01 եզրակացությամբ՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից, արձանագրվել է հետևյալը.

*«Հողային աշխատանքներ-այգեբացի/հողածածկի տակիցվազերի դուրսբերում/ աշխատանքներ» - Նշումներ անհամապատասխանությունների մասին՝ անհամապատասխանությունները բացակայում են:*

*Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս եմ դրական եզրակացություն»:*

Միաժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից Պատվիրատուին ուղղված այն հարցադրմանը՝ արդյո՞ք հնարավոր է մարտ ամսվա առաջին տասնօրյակի աշխատանքները չկատարելով՝ սկսել մարտ ամսվա երկրորդ կեսի աշխատանքները, ***Պատվիրատուի ներկայացուցիչը սույն մասով հայտնել է, որ, եթե կատարողը չի սկսում պայմանագրով նախատեսված մարտ ամսվա առաջին տասնօրյակի համար նախատեսված աշխատանքները, չի կարող անցնել մարտ ամսվա երկրորդ կեսի համար նախատեսված աշխատանքներին, այսինքն՝ պայմանագիրը կնքելուց հետո կատարողը նախ պետք է կատարեր մարտ ամսվա առաջին տասնօրյակի աշխատանքները, նոր միայն, ըստ հաջորդականության, կատարեր տեխնիկական բնութագրով նախատեսված հաջորդիվ աշխատանքները:***

Վերը նշված փաստերի համադրման արդյունքում արձանագրում եմ հետևյալը.

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև «ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/2» ծածկագրով հողային աշխատանքների կատարման պայմանագիրը կնքվել է 15.03.2021թ., որի 1.2 ենթակետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով մասնավորապես սահմանվել է հետևյալը.

***<u>2021թ. մարտ ամսվա առաջին տասնօրյակում</u>*** *նշված այգիներում այգեբացի / հողածածկի տակից վազերի դուրս բերում/ աշխատանքներ՝ առանց վազերի մեխանիկական վնասման: Աշխատանքները կատարվելու են ձեռքով:*

***<u>Մարտ ամսվա երկրորդ կեսին</u>*** *իրականացնել տնկարկների (4.1 հա) միջշարային տարածությունների խորը վար՝ 25–30 սմ խորությամբ, տեխնիկայով:*

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ կողմերի միջև Պայմանագիրը կնքվելու պահին, այն է՝ 15.03.2021թ., Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված աշխատանքը, որի կատարման համար ժամկետ է սահմանվել 2021թ. մարտ ամսվա առաջին տասնօրյակը, արդեն իսկ, ոչ Ընկերության մեղքով, բաց է թողնված եղել: Հետևաբար Ընկերությունը, Պայմանագիրը 15.03.2021թ. կնքելուց հետո փաստացի կատարելով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված աշխատանքը, որի կատարման համար ժամկետ է սահմանվել 2021թ. մարտ ամսվա առաջին տասնօրյակը և որը Պայմանագիրը կնքելու ժամանակ բաց է թողնվել ոչ Ընկերության մեղքով, արդյունքում չի կարողացել Պատվիրատուի կողմից 03.04.2021թ. տրամադրված բացասական եզրակացությամբ 2 օրյա ժամկետում ավարտել մարտ ամսվա երկրորդ կեսի համար նախատեսված աշխատանքները, որոնց համար Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է 15 օր:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***<u>պատասխանատու է մեղքի առկայության դեպքում</u>***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. ***Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով***, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերը նշված իրավակարգավորումները ցույց են տալիս, որ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, Ընկերության կողմից Պայմանագրի կատարմանն ուղղված գործողությունները՝ գտնում եմ, որ Ընկերության դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, քանի որ Ընկերությունն արդյունքում օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2021թ. թիվ 26/26-1/6054-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**